ՀՀ տարածքային կառավարման և զարգացման նախարարություն

Գերմանական համագործակցություն
DEUTSCHE ZUSAMMENARBEIT

Implemented by
giz Deutsche Gesellschaft für Internationale Zusammenarbeit (GIZ) GmbH

Schweizerische Eidgenossenschaft
Confédération suisse
Confederazione Svizzera
Confederaziun svizra

Swiss Agency for Development and Cooperation SDC

USAID
FROM THE AMERICAN PEOPLE

# ԶԵԿՈՒՅՑ

## Հայաստանի Հանրապետության 2017 թ. խոշորացվող համայնքների վերաբերյալ ձեռք բերված տեղեկությունների

# ՄԵՂՐԱՁՈՐ

## համայնք

**(Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան, Մարմարիկ բնակավայրեր)**

Հեղինակ՝ Միհր Հակոբյան

Երևան – 2017

# ՄԵՂՐԱՁՈՐ
## համայնքը՝ հպանցիկ




**Վարչական տարածքը՝** 15 094 հա

**Բնակչությունը՝** 5 788 մարդ

**Մարզը՝** Կոտայք

**Համայնքի կենտրոնը՝** Մեղրաձոր

**Բնակավայրերը՝** Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան, Մարմարիկ

ՀՀ Ազգային ժողովի կողմից 2017 թ. հունիսի 9-ին ընդունված՝ «Հայաստանի Հանրապետության վարչատարածքային բաժանման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին օրենքի համաձայն՝ Կոտայքի մարզի Մեղրաձոր խոշորացվող համայնքի կազմում ընդգրկվում է 5 գյուղական բնակավայր՝ Մեղրաձոր (համայնքի կենտրոն), Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան, Մարմարիկ:

### Համայնքի ընդհանուր նկարագիրը

Համայնքի բնակավայրերը տեղակայված են ՀՀ Արագածոտնի մարզի հյուսիսային հատվածում և մոտ են գտնվում Արագածոտնի մարզին: Բնակավայրերի գոտիականությունը լեռնային է. ծովի մակերևույթից բարձրությունն ըստ բնակավայրերի տատանվում է 1750-1970 մետրի սահմաններում: Համայնքի ընդհանուր վարչական տարածքը խոշորացումից հետո կազմում է **15 094** հա: Տարածքով ամենամեծ բնակավայրը Մեղրաձորն է (6208 հա), ամենափոքրը՝ Աղավնաձորը (1348 հա):

### Բնակչությունը

Համայնքի ընդհանուր բնակչությունը 2017 թ. դրությամբ կազմում է **5 788** մարդ: Բնակչությամբ ևս ամենամեծ բնակավայրը Մեղրաձորն է (2680 մարդ), իսկ ամենափոքրը՝ Հանքավանը (111 մարդ): Համայնքում բնակչության խտությունը կազմում է 44.4 մարդ/կմ$^2$: Ամենախիտ բնակեցված բնակավայրը Աղավնաձորն է (97.26 մարդ/կմ$^2$), ամենանոսրը՝ Հանքավանը (6.01 մարդ/կմ$^2$): Մեղրաձորում բնակչության խտությունը կազմում է 43.17 մարդ/կմ$^2$: Բնակավայրերի վարչական տարածքների ու բնակչության թվի վերաբերյալ տվյալները ներկայացված են աղյուսակ 1-ում:

**Աղյուսակ 1.** Մեղրաձոր խոշորացվող համայնքում ներառված բնակավայրերի վարչական տարածքն ու բնակչությունը

| № | Բնակավայրի անվանումը | Վարչական տարածքը (հա) | Հաշվառված բնակչությունը (2017 թ. դրությամբ) | Բնակչության խտություն (մարդ/կմ$^2$) |
|---|---|---|---|---|
| 1 | **Մեղրաձոր** | 6208 | **2680** | 43.17 |
| 2 | Աղավնաձոր | 1348 | 1311 | 97.26 |
| 3 | Արտավազ | 4288 | 931 | 21.71 |
| 4 | Մարմարիկ | 1402 | 755 | 53.85 |
| 5 | Հանքավան | 1848 | 111 | 6.01 |
| | **Ընդամենը /միջինը/** | **15 094** | **5 788** | **44.4** |

**Քարտեզ 1.** Մեղրաձոր համայնքի բնակչության տեղաբաշխումն (մարդ)՝ ըստ բնակավայրերի




## Բնակավայրերի տեղաբաշխումն ու տրանսպորտային կապերը

Համայնքի 5 բնակավայրերից չորսը տեղակայված են Հ-28 հանրապետական նշանակության ճանապարհի վրա, իսկ Աղավնաձորը գտնվում է դրանից 1.1 կմ հեռավորության վրա: Բնակավայրերից դեպի համայնքի կենտրոն միջին հեռավորությունը 9.63 կմ է, հասնելու համար պահանջվող միջին ժամանակը՝ 14.75 րոպե: Ամենամոտը տեղակայված բնակավայրը Մարմարիկն է (4.6 կմ), ամենահեռուն՝ Հանքավանը (18.4 կմ):

Համայնքի տրանսպորտային կապերի վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 2-ում:

**Աղյուսակ 2.** Մեղրաձոր համայնքի տրանսպորտային կապերը

| Բնակավայր | Ներքին ճանա-պարհների երկարությունը (կմ) | Հեռավորությունը համայնքի կենտրոնից (կմ) | Հասնելու հա-մար պահանջ-վող ժամանակ (րոպե) | Հեռավորությունը մոտակա մայրուղուց |
|---|---|---|---|---|
| **Մեղրաձոր** | 13 | - | - | 0 |
| Աղավնաձոր | 4 | 8 | 13 | 1.1 |
| Արտավազ | 3 | 7.5 | 12 | 0 |
| Հանքավան | 4 | 18.4 | 24 | 0 |
| Մարմարիկ | 4 | 4.6 | 10 | 0 |
| **Միջինը** | **5.6** | **9.63** | **14.75** | **0.22** |

Բնակավայրերի մեծ մասում ներքին ճանապարհները հողային են և վերանորոգման կարիք ունեն, բացառությամբ՝ Աղավնաձորի, որտեղ ճանապարհները հիմնականում ասֆալտապատ են, սակայն ընթացիկ նորոգման կարիք, այնուամենայնիվ, ունեն: Աղավնաձորը մոտակա մայրուղուն կապող ճանապարհը գտնվում է բավարար վիճակում:

Մեղրաձորի հեռավորությունը մարզկենտրոն Հրազդանից 14.8 կմ է:

Ներհամայնքային տրանսպորտ չկա ոչ մի բնակավայրում: Ժամը մեկ հաճախականությամբ համայնքում գործում է Հրազդան-Հանքավան երթուղին, որը սպասարկում է մնացած բնակավայրերին, քանզի, ինչպես արդեն նշվել է, բոլոր բնակավայրերը գտնվում են նույն ճանապարհի վրա կամ դրան շատ մոտ:

### Խմելու ու ոռոգման ջրամատակարարումը և աղբահանությունը[1]

Մեղրաձորում, Աղավնաձորում և Հանքավանում ջրամատակարարումը կառավարվում է ՏԻՄ-ի կողմից, իսկ Արտավազում՝ «Վեոլիա ջուր» ՓԲԸ-ի: Մեղրաձորում խմելու ջուրը տրամադրվում է 12-ժամյա գրաֆիկով, մյուս բնակավայրերում՝ շուրջօրյա: Այս պահին համայնքում ջրամատակարարումն իրականացվում է անվճար, սակայն Արտավազում արդեն հանձնվել է օպերատորին, և շուտով կֆիքսվի նաև սակագին: Մեղրաձորում, Արտավազում և Հանքավանում խմելու ջրի խողովակաշարերը վերանորոգվել են վերջին 7 տարիների ընթացքում, սակայն մասնակի նորոգման անհրաժեշտություն կա: Իսկ Աղավնաձորում խողովակաշարը կառուցվել է ԽՍՀՄ տարիներին, այդուհետ՝ չի վերանորոգվել և հրատապ արդիականացման կարիք ունի: Նշենք նաև, որ ամռան ամիսներին տապի պատճառով ջուրը հաճախ ցամաքում է, և հնարավոր չի լինում ապահովել շուրջօրյա ջրամատակարարում:

Բնակավայրերում ջրամատակարարման վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 3-ում:

[1] Մարմարիկ բնակավայրում խմելու ու ոռոգման ջրամատակարարման և աղբահանության վերաբերյալ տվյալները բացակայում են::

**Աղյուսակ 3.** Մեղրաձոր համայնքում խմելու ջրի մատակարարումը

| **Բնակավայր** | **Ջրամատա-կարարման կառավարողը** | **Ջրամատա-կարարման ժամակարգը** | **Սակագինը (1 մ³)** | **Խողովակաշարի տեխնիկական վիճակը** |
|---|---|---|---|---|
| **Մեղրաձոր** | ՏԻՄ | 12 ժամ | անվճար | մասնակի նորոգման կարիք |
| Աղավնաձոր | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | հիմնանորոգման կարիք |
| Արտավազ | «Վեոլիա ջուր» ՓԲԸ | շուրջօրյա | դեռևս ֆիքսված չէ | մասնակի նորոգման կարիք |
| Հանքավան | ՏԻՄ | շուրջօրյա | անվճար | մասնակի նորոգման կարիք |
| Մարմարիկ | - | - | - | - |

Արտավազում և Հանքավանում ոռոգման համակարգեր չկան, իսկ Մեղրաձորի և Աղավնաձորի բնակիչներն օգտվում են Մարմարիկի ջրամբարից, սակայն ջուրը հաճախ չի բավարարում ողջ բնակավայրին:

Աղբահանությունը համայնքում իրականացվում է կենտրոնացված եղանակով, իսկ աղբը տեղափոխվում է Հրազդանի աղբավայր: Աղբահանության նվազագույն հաճախականությունը շաբաթը մեկ անգամ է: Այն հիմնականում անվճար է. միայն Աղավնաձորում գանձվում է 100 դրամ մեկ անձի համար: Աղբամաններ տեղադրված են Աղավնաձորում և Հանքավանում:

Համայնքում աղբահանության վերաբերյալ տեղեկությունները ներկայացված են աղյուսակ 4-ում:

**Աղյուսակ 4.** Չարենցավան համայնքի աղբահանությունը

| **Բնակավայր** | **Իրականացման եղանակը** | **Հաճախա-կանությունը** | **Սակագինը (1 անձը)** | **Աղբամանների առկայությունը** |
|---|---|---|---|---|
| **Մեղրաձոր** | կենտրոնացված | շաբաթը երկու անգամ | անվճար | - |
| Աղավնաձոր | կենտրոնացված | շաբաթը մեկ անգամ | 100 դր. | 20 |
| Արտավազ | կենտրոնացված | շաբաթը երկու անգամ | անվճար | - |
| Հանքավան | կենտրոնացված | շաբաթը մեկ անգամ | անվճար | 11 |
| Մարմարիկ | - | - | - | - |

**Կրթական հաստատությունները**

Համայնքում գործում է 6 կրթական հաստատություն, որոնցից 1-ը մանկապարտեզ է, 5-ը՝ միջնակարգ դպրոցներ (աղյուսակ 5): Համայնքում չեն գործում հիմնական և ավագ դպրոցներ, երաժշտական, (գեղ)արվեստի ու մարզական դպրոցներ, վարժարաններ:

**Աղյուսակ 5.** Մեղրաձոր համայնքում առկա կրթական հաստատությունները

| Բնակավայր | Մանկապարտեզ (հաճախողների քանակ) | Միջնակարգ դպրոց (հաճախողների քանակ) |
|---|---|---|
| **Մեղրաձոր** | 1 (90) | 1 (301) |
| Աղավնաձոր | - | 1 (130) |
| Արտավազ | - | 1 (86) |
| | | 1 (40) |
| Հանքավան | - | - |
| Մարմարիկ | - | 1 (90) |
| **Ընդամենը** | **1** | **5** |

Համայնքի միակ մանկապարտեզը Մեղրաձորում է և գտնվում է բավարար վիճակում: Մեղրաձորի, Աղավնաձորի և Մարմարիկի միջնակարգ դպրոցները գտնվում են բավարար վիճակում, իսկ Արտավազի երկու դպրոցներն ունեն ընթացիկ նորոգման կարիք: Հանքավանում կրթական հաստատություններ չկան: Աշակերտների թվով ամենամեծը Մեղրաձորի (301 աշակերտ) միջնակարգ դպրոցն է, ամենափոքրը՝ Արտավազի դպրոցներից մեկը (40 աշակերտ):

**Առողջապահական հաստատությունները**

Համայնքում գործում է երեք բուժկետ Արտավազում, Հանքավանում և Մարմարիկում, երկու բուժամբուլատորիա Մեղրաձորում և Աղավնաձորում և մեկ դեղատուն Մեղրաձորում: Մարմարիկի բուժկետն ու երկու բուժամբուլատորիաները, ինչպես նաև դեղատունը գտնվում են բավարար վիճակում, մինչդեռ Արտավազի ու Հանքավանի բուժկետերն ընթացիկ նորոգման կարիք ունեն:

**Մշակութային հաստատությունները**

Համայնքում գործում է երեք մշակույթի տուն Մեղրաձորում, Մարմարիկում և Աղավնաձորում: Առաջին երկուսը ընթացիկ, իսկ Աղավնաձորինը՝ հիմնական նորոգման կարիք ունեն: Մշակույթի տների դահլիճները կարող են տեղավորել 200-500 հանդիսական:

Համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը ներկայացված է քարտեզ 2-ում:

**Քարտեզ 2.** Մեղրաձոր համայնքի կրթական, առողջապահական ու մշակութային հաստատությունների տեղաբաշխումը




## Համայնքի հիմնական կարիքները

Հետազոտության արդյունքում առանձնացվել են բնակավայրերի երեք հիմնական առաջնահերթությունները, որոնք նշվել են համայնքապետարանի ներկայացուցիչների կողմից: Հիմնախնդիրներից երկուսն առաջնային են մի քանի բնակավայրերի համար, մնացածը հատուկ են առանձին բնակավայրերին[2]: Ընդհանուր առաջնահերթություններն են ավտոճանապարհների վիճակի բարելավումը (Մեղրաձոր, Աղավնաձոր, Արտավազ, Հանքավան) և խմելու ջրի ենթակառուցվածքների նորոգումը (Մեղրաձոր, Աղավնաձոր, Հանքավան),

Աղավնաձորում ու Արտավազում առաջնային կարևորություն ունի մանկապարտեզի շենքի հիմնանորոգումը. 1990-ական թթ. սկսած դրանք չեն օգտագործվում անբավարար ֆիզիկական վիճակի պատճառով: Աղավնաձորում հրատապ է համարվում նաև կոյուղու կառուցումը: Հանքավանում առաջնահերթություն է համարվում գազաֆիկացումը:

[2] Մարմարիկ բնակավայրի վերաբերյալ տվյալները բացակայում են:

Սույն զեկույցը լույս է տեսնում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, Շվեյցարիայի զարգացման և համագործակցության գործակալության (ՇԶՀԳ) և ԱՄՆ միջազգային զարգացման գործակալության (ԱՄՆ ՄԶԳ) ցուցաբերած աջակցության շնորհիվ:

Հրատարակության մեջ առկա տեսակետների պատասխանատվությունը կրում են հեղինակները և չեն արտացոլում Գերմանիայի տնտեսական համագործակցության և զարգացման դաշնային նախարարության, ՇԶՀԳ և ԱՄՆ ՄԶԳ-ի և համապատասխան կառավարությունների դիրքորոշումները:

**Հրապարակված է**

Գերմանիայի միջազգային համագործակցության
ընկերության (ԳՄՀԸ) կողմից
Ընկերության գլխամասային գրասենյակներ՝
Բոնն և Էշբորն, Գերմանիա

**ԳՄՀԸ «Լավ տեղական ինքնակառավարում Հարավային Կովկասում» ծրագիր**
Բաղրամյան պող. 4/1, 0019, Երևան
Հայաստանի Հանրապետություն
Հեռ.՝ +374 (0) 10 58 05 39; 58 93 00
Ֆաքս՝ +374 (0) 10 58 92 70
Կայք՝ www.giz.de